



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< ----->> << ----->> 2020թ.

N -----

<<Հետաքննող լրագրողներ>> ՀԿ-ի

<<Հետք>> թերթի լրագրող

պարոն Գրիգոր Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան


Ի պատասխան Ձեր 25.11.2020 թվականի հարցման հայտնում ենք ,որ ՀՀ Արմավիրի մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N01/6/06317-2020 գրությամբ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ատաջարկ ՀՀ Արմավիրի մարզպետարանին 2020 թվականի բյուջեով <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմիններ>> ծրագրով տնտեսագիտական դասակարգման <<Պարզևատրումներ,դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հողվածով նախատեսված գումարից աշխատակիցների հիմնական աշխատավարձի 30 տոկոսի չափով, ընդամենը 7000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ նվազեցնել և ուղղել Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ պաշտպանական անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման նպատակով:Նվազեցումն իրականացվել է:

2020թվականի սեպտեմբերի 27-ից մինչ օրս ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակիցները պարգևավճարներ չեն ստացել:Մինևույն ժամանակ տեղեկացվում է,որ համաձայն <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի մարզպետը, մարզպետի տեղակալը, գլխավոր քարտուղարը, օրենքով նախատեսված կարգով,Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր, որը հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքում: Տեղեկատվության համար կարող եք հետևել կայքին:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ '

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

27.11.2020



VERIFIED OCSP 27.11.2020 16:58:46 GMT+4

Կատ՝ Վ.Մկրտչյան Հեռ. /0237/2-24-12 Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023